ՀԱՅՄԵՏԱՔՍՐԵՍ

ԱԳՐՈ-ՋՈՌ-ԿԱՆՈՆՆԵՐ

ԹԹԵՆՈՒ ՇԵՐԱՄԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՅԵՎ ԽՆԱՄՔԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՄԵՏԱՔՍՐԵՍԻ
ՅԵՐԵՎԱՆ 1939

Պատ. խմբագիր՝ Մկ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

638.2 2215
Ա-17 : Ապրո-Զ.ոո.
Կանոններ. թրթռա
շրջանի կեղծիքների հայտնվելն
1939թ.
1/VI 1/VI Գ. 588

Գլավլիտի լիազոր Վ.—2119 Պատվեր № 15 Տիրաժ 2800

Բանաքննչինի տպարան, Երևան, Լենինի 67.

638.23
Ա-17
ՊՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.
Ա 19296
2215

ԱԳՐՈ-ԶՈՈ-ԿԱՆՈՆՆԵՐ

ԹԹԵՆՈՒ ՇԵՐԱՄԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՅԵՎ ԽՆԱՄՔԻ

Ա. ՇԵՐԱՄԱՏՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

1. Շերամի վորդի կերակրումից 15 որ առաջ պետք է ընտրել և կահավորել շերամատունը։

2. Շերամի վորդի կերակրման համար, բացի հատուկ կառուցված շերամատներից և ընակելի շենքերից, կարելի յե ոգտագործել նաև մարագները, պահեստները և այլ շենքեր, յեթե վերջիններս համապատասխանում են, կամ հարմարեցվում են վորդի կերակրման նորմալ պայմաններին։

3. Շերամատունը պետք է լինի չոր, լուսավոր, ոդափոխության հարմարություններով և մաքուր՝ ինչպես ներքսը, նույնպես և շենքի շրջապատը։

4. Շերամատունը պետք է հեռու լինի վուշոտ ճանապարհներից և շրջապատված չլինի խիտ ծառերով։

5. Շերամատան պատերը, առաստաղը և հատակը պետք է սվաղած լինեն (յեթե տախտակամած չեն), իսկ յեթե առաստաղը գերանածածկ և և այնտեղից հող և թափվում, այդ դեպքում պետք է առաստաղին ֆաներկա կամ թուղթ խփել։

6. Մեկ տուփ (25 գրամ) գրենայից (շերամի սերմից) ստացած վորդերը կերակրելու համար 5-րդ

հառակում պահանջվում է՝ ցեղացու կերակրումների դեպքում 60-75 քառ. մետր, իսկ արդյունաբերական կերակրումների դեպքում՝ 45—50 քառ. մետր կերակրման տարածություն և վոչ պակաս 100 խոր. մետր ծավալ։

7. Շերամատունը պետք է վառարան ունենա, վորպեսզի հնարավոր լինի շենքում նորմալ ջերմաստիճան պահպանել։

8. Վորդը չի կարելի կերակրել հատակի վրա, նրան պետք է կերակրել 2-3 հարկանի կերակրման հատուկ դարակների վրա։ Դարակները լինում են ստանդարտ—պատրաստի, կամ պատրաստվում են տեղում՝ ոգտագործելով փայտեղեն և յեղեգ։ Վորից գործում են չաթաններ։

9. Շերամատունը պետք է ունենա ջերմաչափ (ցանկալի յե նաև խոնավաչափ), ուղղաններ, դանակ և տախտակ՝ տերևը կտրատելու համար, կողով տերևները տեղափոխելու համար, սավաններ, մկրատ, սղոց, թուղթ՝ վորդի տակը փռելու համար և ծակոտկեն թուղթ (սյոմնիկ), վորը գործածվում է խշտիները փոխելու և վորդերին նոսրացնելու ժամանակ։

2. ՇԵՐԱՄԱՏԱՆ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ (ԴԵԶԻՆՖԵԿՑԻԱՆ)

1. Շերամատան և ինվենտարի ախտահանումը պետք է կատարել նախորդ, կերակրումներն սկսելուց 10 որ առաջ։

2. Նախքան ախտահանումը շենքը պետք է ազատել կահավորումից, պատերը, առաստաղը, հատակը, լավ մաքրել և կրով սպիտակացնել։

3. Կերակրման ինվենտարը դրսում լավ լվանալ, մաքրել, արևի տակ չորացնել, ապա ներս տանել և դարսել շերամատան կենտրոնում։

4. Մինչև ախտահանումը ստուգել պատերը, դռները, պատուհանները՝ ճեղքեր և անցքեր լինելու դեպքում ամուր փակել ու ամրացնել։

5. Ախտահանումը կատարել ֆորմալինի 4%-ոց լուծույթով։ Մեկ տուփ գրենայի կամ 100 խոր. մ. ծավալի համար 3 լիտր (40%-ոց) ֆորմալինը լցնել 30 լիտր ջրի մեջ, լավ խառնել, վորից հետո լցնել սրսկիչ մեքենայի (վերմորել) մեջ և ապա կատարել ախտահանում։

6. Սրսկել շերամատան պատերը, առաստաղը, հատակը ինչպես նաև ինվենտարը։

7. Քանի վոր ֆորմալինի գոլորշին ազդում է մարդու աչքերի և շնչափողի վրա, ախտահանողը պետք է դրծածի հակագազ և ախտահանի արագությամբ, յերկար չմնալով շենքում։ Հակագազ չլինելու դեպքում ախտահանողը պետք է իր բերանն ու քիթը կապի թաց շորով։

8. Ախտահանումն ավարտելուց հետո շերամատան դռներն ամուր փակել և այդպես թողնել 48 ժամ։

9. 48 ժամը լրանալուց հետո, շերամատան լուսամուտները ու դռները պետք է լավ բաց անել և շենքն ողափոխել։

10. Ախտահանումից 2-3 որ հետո միայն կարելի յե այդ շենքում վորդ կերակրել։

11. Քանի վոր ֆորմալինի ազդեցությունը կախված է ջերմաստիճանից, ախտահանումը պետք է կատարել որվա տաք ժամերին, կամ նախքան ախտահանումը շենքը տաքացնել վառարանով։

12. Առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնել այն շենքերի ախտահանման վրա, վորտեղ կերակրվելու յե ցեղացու գրենա, ինչպես նաև այն շերամատների վրա, վորտեղ նախորդ տարվա կերակրումների ժամանակ նկատվել է վորդերի հիվանդություն։

3. ՎՈՐԴԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Շերամի վորդ կերակրելու համար վորդը (կամ գրենան) պետք է ստանալ միմիայն գրեն—գործարաններից կամ շրջմետաքսներից։ Խստիվ արգելվում է տնային ձևով պատրաստած կամ կողմնակիորեն ձեռք բերված սերմից վորդ արթնացնել, քանի վոր այդ հանդիսանում է համաճարակային հիվանդությունների ոճախներից մեկը։

2. Արգելված սերմից ստացած վորդի կերակրումներ հայտնաբերելու դեպքում վորդը շերամաբուծության հրահանգչի կողմից անհապաղ վոչնչացվում է, իսկ շերամապահը յենթարկվում է պատասխանատվության։

3. Մեկ տուփ գրենայից արթնացած վորդի կերակրման համար պահանջվում է հետևյալ կերակրման տարածությունը.

Հասակներ	Յեղացու	Արդյունաբերական
Առաջին	3-4 ք. մետր	2-3 ք. մետր
Յերկրորդ	4-6 »	4-5 »
Յերրորդ	16-17 »	14-16 »
Չորրորդ	35-40 »	30-35 »
Հինգերորդ	60-75 »	45-50 »

4. Վորդի կերակրման ընթացքում շերամատան ջերմաստիճանը պետք է պահպանվի առաջին չորս հասակներում 22—23° Յելսիուսով, իսկ 5-րդ հասակում և բոժոժ հյուսելու ընթացքում՝ 21-22° Ց։ Հարաբերական խոնավությունը բոլոր հասակներում պետք է լինի 60-70%։

5. Խստորեն պետք է հետևել շերամատան ջերմաստիճանին, ջերմաստիճանը բարձրանալու դեպքում ուժեղացնել շերամատան ոդափոխությունը, իսկ իջնելու դեպքում՝ վառարանը վառել։

6. Շերամատունն որվա ընթացքում պետք է մի քանի անգամ ողափոխել, մանավանդ կերակրման վերջին հասակներում։

7. Որվա ընթացքում 1-2 անգամ շերամատունը մաքրել թաց ավելով։

8. Յեթե շերամապահն ստանում է տարբեր որերի դուրս յեկած, հետեվապես տարբեր հասակի վորդեր, այդ դեպքում վորդերին պետք է հավասարեցնել։

Վորդերի հավասարեցումը կատարվում է առաջին յերկու հասակների ընթացքում, վերջին որերին դուրս յեկած վորդերը տեղավորել վերին դարակում վորտեղ ջերմաստիճանը բարձր է, և կերակրել մյուսներից ավելի։

9. Առաջին և յերկրորդ հասակներում վորդին կերակրել կտրտած տերևով, յերկրորդ հասակում՝ ամբողջական տերևներով և մանր ճյուղերով, իսկ 4-րդ և 5-րդ հասակներում՝ ամբողջական ճյուղերով։

10. Վորդերին կերը (տերև) տալ առաջին յերեք հասակներում՝ որական 8 անգամ, իսկ վերջին յերկու հասակներում՝ 6-7 անգամ։

11. Յեկնելով ստախանովական շերամապահների փորձից՝ կիրառել դիշերային կերակրումներ, վորն զգալի չափով կրճատում է վորդերի կերակրման տևողությունը։

12. Վորդին կեր տալուց պետք է հաշվի առնել կերակրման պայմանները, այն է՝ ջերմությունը, խոնավությունը, տերևի վորակը և ապա տալ այն քանակով, վոր վորդերը լրիվ յուրացնեն կերը առանց մնացորդի։

13. Վորդերին տրված կերը պետք է լինի թարմ և մաքուր, յեթե տերևը փոշոտված է, անհրաժեշտ է մաքրել, իսկ յեթե անձրևներից թաց է, անհրաժեշտ է բարակ շերտով ստվերում փռել, չորացնել և նոր տալ վորդին։

14. Տերևը պետք է քաղել առավոտյան և յերեկոյան զով ժամերին։

15. Մինչև տերևի քաղելը, առավոտյան կեբաբկըրման համար պետք է ունենալ կերի պաշար։

16. Ամպամած որերին կերը կարելի յե քաղել ամբողջ օրվա ընթացքում. անձրևային որերին կերը քաղելուց հետո անպայման չորացնել անձրևի կաթիլներից, վորից հետո միայն տալ վորդերին։

17. Կերը պետք է պահել վոչ թե շերամատանը, այլ առանձին տեղ, մանր ճյուղերը և տերևները թարմ պահելու նպատակով ծածկել թաց շորով, իսկ մեծ ճյուղերը պատերի մոտ դարսել ուղղահայաց և ծածկել խոնավ շորով։ Յեթե կերը շերամատանը պահվի ջերմաստիճանից շուտ կթառամի, ինչպես նաև կառաջացնի ավելորդ խոնավություն։

18. Հաճախակի պետք է փոխել վորդի տակի խշտինները, թույլ չտալ նրանց կուտակում։ Յուրաքանչյուր հասակում խշտինները փոխել վոչ պակաս յերկու անգամից (քնից առաջ և արթնանալուց հետո), իսկ ամպամած և անձրևային յեղանակներին փոխել ավելի հաճախ։

19. Հետևել, վոր վորդերը դարակների վրայից ցած չընկնեն, ընկնելու դեպքում վերցնել և դնել տեղը։

20. Վորդի տակից հանած խշտինները և աղբը դուրս տանել շերամատնից։

4. ՊԱՅՔԱՐԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Շերամի վորդի հիվանդություններից հայտնի յեն՝ պերբինան, ֆլաշերիան, դեղնացավը, չախլատը և մուսկարդինան, վորոնց հայտնաբերման դեպքում, պետք է ձեռք առնել կանխիչ միջոցներ՝

1. Վարդերի մեջ վորևե հիվանդություն նկատելու դեպքում անմիջապես հայտնել շերամաբուծության հրահանգչին։

2. Հիվանդ վորդերի խշտիներն անմիջապես փոխել։ Թարմ կերի վրա բարձրացած առողջ վորդերին տեղափոխել նոր ախտահանված շենք, իսկ հիվանդներին և մահացած վորդերին իրենց խշտիներով և աղբով դուրս տանել շերամատնից և այրել։

3. Արգելել հիվանդ և մահացած վորդերով տնային թռչուններ կերակրելը։

4. Արգելվում է վարակված շերամատներից ուրիշ շերամատներ այցելելը։

5. Վարակ չտարածելու նպատակով հիվանդ վորդերին տեղափոխելուց հետո ձեռքերը լավ լվանալ, մաքրել կամ փոխել արտահագուստը, մաքրել ախտահանել վարակված շենքը և կահավորումը։

5. ՊԱՅՔԱՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Շերամատան վնասատուներից ամենավտանգավորներն են մկները, մրջյունները, վայրի և ընտանի թռչունները, կրեատները, ոձերը և կենդանիները։ Վնասատուների դեմ պայքարելու հիմնական միջոցներից են՝ շերամատներում սննդամթերքներ չպահելը, լուսամուտները ցանցապատելը, դռները փակ պահելը։

1. Պայքարը մկների դեմ.

ա) Եթե շերամատանը մկներ են յերևում անհրաժեշտ է առաջին հերթին գտնել նրանց բները և փակել, կարելի յե բները ջարդած ապակի լցնել և յերեսը սվաղել։

բ) Դարակների վոտքերին անցկացնել ձաղաբաձև թիթեղներ։

գ) Շերամատանը մկները ուժեղ չափով վնաս հասցնելու դեպքում դիմել ցուցումներ ստանալու համար շերամաբուծության շրջանային հրահանգչին, կամ վնասատուների դեմ պայքարող հողբաժնի մասնագետին։

2. Պայքարը մրջյունների դեմ՝

ա) Կերակրման դարակները պետք է պատերից հեռու դնել.

բ) Դարակների վոտքերի տակ ջրով լցված ամաններ դնել

գ) Դարակների վոտքերի շուրջը բլուրաձև մոխրով պատել.

դ) Մրջյունների բները լցնել հետևյալ հեղուկով— մեկ դույլի մեջ լցնել 3 բաժակ տաք ջուր, նրան ավելացնել 35—40 գրամ մանրացրած սապոն և մեկ բաժակ նավթ, լավ խառնել մինչև փրփուր դառնալը, ապա ավելացնել ջուր՝ մինչև դույլի լցվելը։

ե) Կարելի է նաև դարակների վոտքերին անիվի յուղ կամ մազութ քսել, հատակից 5-10 սմ. բարձրության 3 սմ. լայնությամբ հաստ շերտով, իսկ յեթե դարակները կախված են առաստաղից, մազութը կամ անիվի յուղը ողակաձև քսել պարաններին կամ յերկաթալարերին։

3։ Կրեաններից և թռչուններից վորդերին պահպանելու համար շերամատան լուսամուտները ցանցապատել մետաղե ցանցով կամ մարլայով։

4. Հավերին ու տնային կենդանիներին թույլ չտալ շերամատուն մտնել։

6. ԽՆԱՄՔԸ ԲՈԺՈԺ ՀՅՈՒՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

2. Վորդին բոժոժ հյուսելու համար պետք է տալ այնպիսի բույսեր, վորոնք ունեն բավականաչափ ճյուղավորություններ և չունենան փշեր ու հոտ։

2. Ցախը պետք է պատրաստել նախորոք, դեռ վորդի 4-րդ հասակում։

3. Ցախը հավաքելուց հետո անհրաժեշտ է մաքրել ավելորդ մասերից, չորացնել և փնջեր կապել։

4. Ցախը պետք է դնել այն ժամանակ, յերբ վորդը արդեն հասունացել և և բոժոժ հյուսելու տեղ և փնտ-

բում։ Ցախի փնջերը դասավորել հավասար շարքերով փունջը փնջից 30 սմ. հեռավորության վրա, այն հաշվով, որ հնարավոր լինի հետ մնացած վորդերին կերակրել։

5. Բուժում հյուսելու ժամանակ վորդերին չի կարելի ձեռք տալ, շարժել, տեղափոխել, վորովհետև դրանով ընդհատվում է բուժումի հյուսումը և տեղի յե ունենում մեռաքսի կորուստ։

7. ԲՈՒԺՈՒՄԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ՅԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

1. Բուժումի բերքահավաքը պետք է սկսել ցեղացու կերակրումների դեպքում վորդերի մասսայական բուժում հյուսելուց վոչ շուտ քան 9-րդ որը և վոչ ուշ քան 11-րդ որը, իսկ արդյունաբերական կերակրումների դեպքում՝ վորդերի մասսայական բուժում հյուսելուց 9-որ հետո։

Ծանոթություն.—Նշված ժամկետները պետք է ընդունել վորպես ընդհանուր դրված, սակայն յուրաքանչյուր դեպքում ղեկավարվել շերամբուծության հրահանգչի ցուցմունքներով։

2 Յեթե բուժումի հյուսումը տեղի յե ունեցել դարակներում դրված ցախերի վրա, բերքահավաքը պետք է սկսել ներքին հարկերից հակառակ դեպքում վերևի հարկերի խշտինների մնացորդները և աղբը կթափվի ներքևի հարկերի բուժումների վրա, և կկեղտոտի նրանց։

3. Բերքահավաքն ավարտելուց հետո բուժումները պետք է մաքրել բամբակից, ջոկել սև չխաբները և թույլ հյուսվածները, քանի վոր նրանք բուժումի տեղափոխման ժամանակ կարող են ճզմվել և կեղտոտացնել բուժումը, իջեցնելով նրա վորակը։

4. Բուժումը մաքրելուց և տեսակավորելուց հետո պետք է բարակ շերտով փռել շենքում շորի վրա։

5. Բոժոժը հանձնել մթերման կետին վոչ ուշ քան բոժոժաքաղի հաջորդ օրը։

6. Բոժոժի տեղափոխումը կատարել առավոտյան և յերեկոյան հով ժամերին, կոզովներում կամ ծածկոտկին արկղներում։

7. Չի թույլատրվում բոժոժը տեղափոխել պարկերում կամ սավաններում։

8. Չխար և թույլ բոժոժները ընդունման կետին հանձնել առանձին։

8. ԹԹԵՆՈՒ ՈՉՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳԱՐՆԱՆ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Վորդերի փոքր հասակներում (1-ին և 2-րդ) առանց ճյուղերին ձեռք տալու ծառից պոկել նրա բնի և պսակի վրա գտնվող ավելորդ ճյուղերի տերևները։

2. Վորդերի 3-րդ հասակում կտրել պսակի մի չին մասի այն մանր ճյուղերը, վորոնք խանգարում են միմիյանց, ինչպես նաև բնի վրա գտնվող ճյուղերը։

3. Վերջին հասակներում, այն է՝ վորդի 4-րդ և 5-րդ հասակներում պետք է ոգտագործել պսակի վրայի բոլոր ճյուղերը՝ կտրելով նրանց 1-1,5 սմ. բարձրությամբ։

4. Կերակրման համար ծառն ոգտագործելիս, յեթե ճյուղերը հաստ են, պետք է կտրել այդու սուր սղոցով, իսկ յեթե ճյուղերը բարակ են՝ այդու սուր դանակով կամ մկրատով։ Ճյուղերը կտրելուց հետո ծառը մաքրել չորուկներից և ավելորդ մասերից։

5. Ծառը լրիվ ոգտագործելուց և մաքրելուց հետո հողամասը առատ ջրել և բների շուրջը փխրեցնել։

9. ՎՈՐԴԻ ԱՄՌԱՆ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Շերամի վորդի ամռան կերակրումների համար հատկացնել հիմնական տիպի շենքեր, վորտեղ կերա-

կըրման շրջանում հնարավոր լինի պահպանել պահանջվող ջերմաստիճանը։

2. Շերամատները պետք է լինեն մաքուր և ոդափոխության հարմարություններով, քանի վոր ամռան կերակրումները զուգադիպում են շոգերին, և շերամատների ոդափոխության պահանջն ավելանում է։

3. Շերամատների և կերակրման ինվենտարի ախտահանումը 100 տոկոսով պարտադիր է։

4. Շերամատների և ինվենտարի մաքրումը, լվանալը, սպիտակացումը, ախտահանումը կատարվում է նույն ձևով, ինչ վոր գարնան կերակրումների ժամանակ։

5. Շերամատան ջերմաստիճանը վորդերի կերակրման առաջին հասակներում պետք է պահպանվի 22-23°. 3, իսկ 5-րդ և հյուսման շրջանում 21-22°, 60-70 տոկոս խոնավության պայմաններում։

6. Շերամատան ջերմաստիճանը բարձրանալու դեպքում առավոտյան և յերեկոյան հովին լուսամուտներն ու դռները բաց անել, իսկ ցերեկները լուսամուտներին թաց վարագույրներ կախել, ջուր ցանել ինչպես ներսը նույնպես և շերամատան շրջապատում։

7. Վորդերին կերակրել հաճախակի, 2 ժամը մեկ անգամ, բայց քիչ բաժիններով, քանի վոր ամռան բարձր ջերմաստիճանից տերևը շուտ է չորանում և լիովին չի ոգտագործվում վորդի կողմից։

8. Պաշարի համար հավաքած կերը թարմ պահելու նպատակով ճյուղերի կտրած կողմը դնել ջրի մեջ, իսկ մանր ճյուղերն ու տերևները ծածկել թաց սավանով։

9. Լայն չափով կիրառել գիշերային կերակրումները վոչ պակաս յերկու անգամից։

10. Աշտիները փոխել ավելի հաճախ, այն է ամեն հասակում 2-3 անգամից վոչ պակաս։

11. Առաջին և երկրորդ հասակներում վորդին կերակրել կտրված տերևներով, երրորդ հասակում՝ ամբողջական տերևներով, իսկ չորրորդ և հինգերորդ հասակներում, կերը տալ մանր ճյուղերով։

12. Վորդերը կերակրել անպայման դարակների վրա։

13. Խշտինները փոխելիս գործածել ծակոտկեն թուղթ (սյոմնիկ)։

14. Հիվանդություններին և վնասատուներին դեմ պայքարը, ինչպես նաև մնացած բոլոր աշխատանքները, այն է՝ խնամքը բոժոժ հյուսելու շրջանում, բոժոժի բերքահավաքը և հանձնումը, նույնն է, ինչ վոր դարնան կերակրումների ժամանակ։

10. ԿԵՐԻ ՖՈՆԴԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՄՌԱՆ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Կերը պետք է քաղել որվա զով ժամերին, այն է՝ առավոտյան և յերեկոյան։

2. Կերակրման համար պետք է ոգտագործել դարնանն ոգտագործված ծառերի ընելի և արմատավզի քնած աչքերից դուրս յելած նոր ճյուղերը, ինչպես նաև պսակի ճյուղերի վրա գտնվող ըճերը, բայց յերբեք չպետք է ձեռք տալ պսակի հիմնական ճյուղերին։

3. Վորդերի 4-րդ և 5-րդ հասակներում կարելի յե կերակրել դարնան կերակրումների ժամանակ չոգտագործված ծառերի տերևները և ճյուղերը։

4. Ճյուղերը կտրելիս չպետք է վնաս հասցնել ծառին պետք է կտրել այլու սուր դանակով կամ սղոցով։

5. Փոշոտ տերևները և ճյուղերը անպայման մաքուր ջրով լվանալ, ապա չորացնելուց հետո միայն կերակրել վորդերին։

Ա 19296

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0007935

275

A II 19296

13920

пров.

Пров. 1940 г.